**Հավելված 2**

**Տեղեկատվություն**

**ՀՀ մարզերի և այլ երկրների վարչատարածքային միավորների միջև**

**համագործակցության վերաբերյալ**

| Թիվ | Համագործակցություն | Տարեթիվ | Ընթացիկ վիճակ |
|---|---|---|---|
| 1. | ,,ADRA,,-ի կողմից (Ադվենտիստական զարգացման և օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ) Եղնիկ, Թաթուլ համայնքներում ամանորյա միջոցառումների կազմակերպում եւ արժեքավոր նվերների տրամադրում: | 2015թ. 10-11 հունվարի | ,,ADRA,, (Ադվենտիստական զարգացման և օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից) Եղնիկ, Թաթուլ համայնքներում կազմակերպվել են ամանորյա միջոցառումներ և արժեքավոր նվերներ են տրամադրվել Եղնիկի 60, Թաթուլի 100 սոցիալապես անապահով ընտանիքի: |
| 2. | ,,Սեյվ դը չիլդրըն ինտերնեյշնլ,, հայաստանյան ներկայացուցչության կողմից Ն. Սասնաշենի մշակույթի տան, Կաքավաձորի, Նոր Եդեսիայի, Արայի դպրոցների, Երնջատափի բնակելի շենքի կոյուղու, Բյուրականի մշակույթի տան, Կարբիի մանկապարտեզի վերանորոգում: | 2015թ. հունվար-մինչև տարեվերջ | ,,Սեյվ դը չիլդրըն ինտերնեյշնլ,, հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվում են Ն. Սասնաշենի մշակույթի տան, Կաքավաձորի, Նոր Եդեսիայի, Արայի դպրոցների, Երնջատափի բնակելի շենքի կոյուղու, Բյուրականի մշակույթի տան, Կարբիի մանկապարտեզի վերանորոգման ծրագրեր: Նախագծային-նախահաշվային աշխատանքները կատարված են:: |
| 3. | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից Վերին Սասունիկի բնակիչներ Ռազմիկ Պետրոսյանի, Լաերտ Գրիգորյանի և Արման Հովհաննիսյանի անապահով | 2015թ. հունվար-մինչև տարեվերջ | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից Վերին Սասունիկում իրականացվում է Ռազմիկ Պետրոսյանի, Լաերտ Գրիգորյանի և Արման Հովհաննիսյանի անապահով ընտանիքների համար բնակարանների բարելավման ծրագիր: |

| | | | |
|---|---|---|---|
| | ընտանիքների համար բնակարանների բարելավման ծրագիր: | | |
| 4. | ,,Կամրջակ,, սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից Լուսգյուղի և Ագարակավանի մանկապարտեզներին գույքի տրամադրում: | 2015թ. հունվար-փետրվար | ,,Կամրջակ,, սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից Լուսգյուղի և Ագարակավանի մանկապարտեզներին տրամադրվել է գույք՝ մահճակալներ, սեղան-աթոռներ, պահարաններ և այլն: |
| 5. | ,,Վերջին օրերի սրբեր,, բարեգործական կազմակերպության կողմից Ագարակավանի դպրոցին գույքի տրամադրում: | 2015թ. 25 փետրվարի | ,,Վերջին օրերի սրբեր,, բարեգործական կազմակերպության կողմից Ագարակավանի դպրոցին տրամադրվել են աշակերտական և աշխատանքային սեղան-նստարաններ, գրատախտակներ, պահարաններ և այլ անհրաժեշտ գույք ու պարագաներ: |
| 6. | Մասնակցություն Խաղաղության կորպուսի կողմից կորպուսի կամավորների և մարզի ուսուցիչների համար Ծաղկաձորում կազմակերպած սեմինարին: | 2015թ. 23-25 փետրվարի -25 | Խաղաղության կորպուսի կամավորները և մի խումբ ուսուցիչներ մասնակցել են կորպուսի կողմից Ծաղկաձորում կազմակերպած սեմինարին: |
| 7. | Մասնակցություն Քուվեյթի անկախության օրվան նվիրված պաշտոնական ընդունելությանը: | 2015թ. 24 փետրվարի | Մարզի ղեկավարությունը մասնակցել է Քուվեյթի անկախության օրվան նվիրված պաշտոնական ընդունելությանը: |
| 8. | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի հետ Դդմասար, Հնաբերդ, Պարտիզակ համայնքների դպրոցների վերանորոգման վերաբերյալ պայմանավորվածության ձեռք բերում: | 2015թ. փետրվար | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Դդմասար, Հնաբերդ, Պարտիզակ համայնքների դպրոցների վերանորոգման վերաբերյալ: |
| 9. | ,,BirthLink,, հասարակական կազմակերպության և ՎիվաՍել-ՄՏՍ-ի կողմից Թալինի բժշկական կենտրոնին նորածնային խնամքի սարքավորումների | 2015թ. 06 մարտի | ,,BirthLink,, հասարակական կազմակերպության և ՎիվաՍել-ՄՏՍ-ի կողմից Թալինի բժշկական կենտրոնի ծննդաբերական բաժանմունքին տրամադրվել են նորածնային խնամքի սարքավորումներ՝ շարժական տաքացուցիչ, ֆոտոթերապիայի սարք, |

| | | | |
|---|---|---|---|
| | տրամադրում: | | ներարկման միջոցներ, պուլսօքսիմետր, տաքացվող ներքնակ, հրատապ իրավիճակների համար նախատեսված պայուսակ և այլն: |
| 10. | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի հետ մի շարք դպրոցներում կրթական, առողջապահական, սոցիալական ծրագրերի իրականացման շուրջ պայմանավորվածության ձեռք բերում: | 2015թ. մարտ | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել մի շարք դպրոցներում կրթական, առողջապահական, սոցիալական ծրագրերի իրականացման շուրջ: |
| 11. | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի և մարզպետ Սարգիս Սահակյանի համատեղ հովանավորությամբ բնակարանի նվիրատվություն Մելիք գյուղի բնակիչ Մկրտիչ Վարդանյանի անապահով ընտանիքին: | 2015թ. մարտ | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի և մարզպետ Սարգիս Սահակյանի համատեղ հովանավորությամբ Մելիք գյուղի բնակիչ Մկրտիչ Վարդանյանի անապահով ընտանիքին նվիրաբերվել է բնակարան: |
| 12. | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի և մարզպետ Սարգիս Սահակյանի աջակցությամբ բնակարանի վերանորոգում Պարտիզակ համայնքում: | 2015թ. մարտ-հուլիս | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի և մարզպետ Սարգիս Սահակյանի աջակցությամբ վերանորոգվում է Պարտիզակ համայնքի պայմանագրային զինծառայող, 2014թ. օգոստոսի 4-ին զոհված ազատամարտիկ Արամ Գրիգորյանի անապահով ընտանիքի բնակարանը: |
| 13. | ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանյան գրասենյակի կողմից մարզի 46 դպրոցում ,,Տաք սնունդ,, ծրագրի իրականացում: | 2014թ. սեպտեմբեր-2015թ. մայիս | ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանյան գրասենյակի կողմից մարզի 46 դպրոցում իրականացվում է ,,Տաք սնունդ,, ծրագիրը: 1-4-րդ դասարանների աշակերտների համար տաք սնունդը պատրաստվում է տեղում և մատուցվում է երկար դասամիջոցի ընթացքում: |

| | | | |
|---|---|---|---|
| 14. | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցի վերանորոգում: | 2015թ. ընթացքում | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից վերանորոգվում է Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցը: |
| 15. | Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Աշտարակ, Օհանավան, Մուղնի,Սասունիկ, Կարբի համայնքների խմելու ջրի ներքին ցանցի կառուցում և հիմնանորոգում: | 2014-2015թթ | Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվում է Աշտարակ, Օհանավան, Մուղնի,Սասունիկ, Կարբի համայնքների խմելու ջրի ներքին ցանցի կառուցում և հիմնանորոգում: Աշխատանքներն ընթացքի մեջ են և շարունակական են լինելու: |
| 16. | Համագործակցություն Դիակոնիա բարեգործական հիմնադրամի հետ: | 2014-2015թթ. | Դիակոնիա բարեգործական հիմնադրամը մարզում իրականացնում է սոցիալապես անապահով, ծնողազուրկ, ազատամարտիկների ընտանիքներին ֆինանսական, սոցիալական աջակցության, բնակարանների վերանորոգման, ուսանողական վարձերի տրամադրման ծրագրեր: Իրականացվում են բնակարանի վերանորոգման, ուսման վարձավճարի հատկացման, բուժօգնության, սոցիալական խնդիրների օժանդակման եւ այլ ծրագրեր: Բոլոր ծրագրերը շարունակական են: |
| 17. | ՅՈՒՆԵՍԿՕ-ի ,,Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար,, շրջանակում ներառական նախակրթարանի ստեղծում Թալին քաղաքում: | 2014-2015թթ. | ՅՈՒՆԵՍԿՕ-ի ,,Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար,, ծրագրի շրջանակում ,,Թալինի կանանց ռեսուրս կենտրոն,, զարգացման հիմնադրամի կողմից Թալին քաղաքում ստեղծվելու է ներառական նախակրթարան, որը իրականացնելու է Թալինի տարածաշրջանում ծնողների համար հոգեբանական, սոցիոլոգիական, առողջապահական, զբոսաշրջության թեմաներով ուսուցումներ, խորհրդատվություններ: |

| | | | |
|---|---|---|---|
| 18. | ՅՈՒՆԵՍԿՕ-ի ,,Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար,, ծրագրի շրջանակում համատեղ ազգային նվագարանների պատրաստման վարպետաց դպրոցի ստեղծում մարզի սահմանամերձ գյուղերում: | 2014-2015թթ. | ՅՈՒՆԵՍԿՕ-ի ,,Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար,, ծրագրի մրցույթում հավանության է արժանացել մարզի սահմանամերձ գյուղերում համատեղ ստեղծել ազգային նվագարանների պատրաստման վարպետաց դպրոց հիմնելու ծրագիրը: |
| 19. | «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» գրասենյակի կողմից առողջության կենտրոնի հիմնադրում Մուղնիում: | 2015թ.մարտ-հուլիս | «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» գրասենյակի կողմից Մուղնիում հիմնադրվում է առողջության կենտրոն: |
| 20 | ,,Հայաստան,, համահայկական հիմնադրամի կողմից Աշտարակի թիվ 3 և Չքնաղի դպրոցներում համակարգչային դասասենյակների ստեղծում: | 2015թ. ընթացքում | ,,Հայաստան,, համահայկական հիմնադրամի կողմից Աշտարակի թիվ 3 և Չքնաղի դպրոցներում իրականացվում է համակարգչային դասասենյակների ստեղծման ծրագիր: |
| 21 | ,,Հայ կրթական հիմնարկություն,, հիմնադրամի կողմից անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի փոխհատուցում: | 2015թ. ընթացքում | ,,Հայ կրթական հիմնարկություն,, հիմնադրամի կողմից փոխհատուցվել է անապահով 3 ուսանողի ուսման վարձը: |
| 22. | ,,Հայ կրթական հիմնարկություն,, հիմնադրամի կողմից Նոր Ամանոս, Կանիաշիր, Ակունք, Կաթնաղբյուր, Արագածավանի թիվ 1 դպրոցների վերանորոգում: | 2015թ. հունվար-սեպտեմբեր | ,,Հայ կրթական հիմնարկություն,, հիմնադրամի կողմից հիմնանորոգվում են Նոր Ամանոս, Կանիաշիր, Ակունք, Կաթնաղբյուր, Արագածավանի թիվ 1 դպրոցները: |
| 23. | ,,Հայաստան,, համահայկական հիմնադրամի կողմից Սասունիկի մանկապարտեզի կահավորում: | 2015թ.հունվար-հունիս | ,,Հայաստան,, համահայկական հիմնադրամի կողմից իրականացվում է Սասունիկի մանկապարտեզի կահավորումն ամբողջությամբ: |

| | | | |
|---|---|---|---|
| 24 | Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ բարեգործական կազմակերպության կողմից  Թալինի թիվ 3 մանկապարտեզի և Ակունքի դպրոցի ջեռուցման համակարգերի տեղադրում: | 2014թ.27-դեկտեմբեր-2015թ. 16 փետրվար | Վորլդ Վիժն Ինթերնեշնլ բարեգործական կազմակերպության կողմից Թալինի թիվ 3 մանկապարտեզի և Ակունքի դպրոցում տեղադրվել են ջեռուցման համակարգեր: |

Հավելված 1

**Տեղեկատվություն**

**ՀՀ մարզերի և ԱՊՀ անդամ պետությունների վարչատարածքային միավորների միջև**

**համագործակցության վերաբերյալ**

| Թիվ | Համագործակցություն | Տարեթիվ | Ընթացիկ վիճակ |
|---|---|---|---|
| 1. | Հանդիպում ռուս-հայկական համագործակցության հայաստանյան ներկայացուցչության ռուսաց լեզվի բաժնի ղեկավար Նատալյա Երեմենկոյի հետ: | 2015թ. 16 մարտի | Մարզպետարանում կայացել է մազրի ղեկավարության հանդիպումը ռուս-հայկական համագործակցության հայաստանյան ներկայացուցչության ռուսաց լեզվի բաժնի ղեկավար Նատալյա Երեմենկոյի հետ: Քննարկվել են Մեծ Հայրենականի հաղթանակի օրվան նվիրված միջոցառումների ծրագիրը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հանրակրթական դպրոցներում համատեղ կազմակերպել թեմտիկ ֆիլմերի դիտում և քննակում, շարադրությունների, նկարների, ռուս գրողների ստեղծագործությունների ասմունքի մրցույթներ, Եվգենի Եսենինի ծննդյան 120-ամյակին նվիրված միջոցառում,, ,,Մարդու ճակատագիրը,, գրքի քննարկում, մասնակցություն մարզպետի հովանավորությամբ տպագրված ,,Արագածոտն,, և վաստակավոր ուսուցչուհի, Լյուբով Հովհաննիսյանի ,,Հայաստնի սիրել ռուսերենով,, գրքերի քննարկումներին: |